

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/9

28 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Թեմուր Տալոյանի 02.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 251 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Թեմուր Տալոյանի գանգատում բերված փաստարկները.**

03.09.2014 թ-ին Ա/Ձ Թեմուր Տալոյանը ստացել է ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 251 որոշումը, որով իրեն առաջադրվել է 448.775 դրամ պարտավորություն:

Ա/Ձ Թեմուր Տալոյանը տեղեկացնում է գրանցվել է 2006 թ-ի հունիս ամսին և ընդհանրապես գործունեություն չի իրականացրել, 2011 թ-ի ապրիլ ամսին լուծարվել է:

Վերը նշված որոշման համաձայն պարտավորություններն առաջադրվել են 2006 թ-ից մինչև 2011 թ-ի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով, սակայն Ա/Ձ Թեմուր Տալոյանը տեղյակ չի եղել այդ մասին: Վերջինս կարծել է, որ գործունեություն չիրականացնելու ընթացքում պարտավորություններ չեն հաշվարկվում:

Ա/Ձ Թեմուր Տալոյանը գտնում է, որ իր նկատմամբ պետք է կիրառվեր «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը և զիջվեին 2006 թ-ից մինչև 2008 թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժերը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Թեմուր Տալոյանը խնդրում է մասնակի՝ 239.863 դրամի չափով, բեկանել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 251 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Թեմուր Տալոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 30.08.2014 թ-ին ընդունել է թիվ 251 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 27.08.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Թեմուր Տալոյանը ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների, այն է՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն ընդամենը 448.775 դրամ, որից ապառք 290.000 դրամ, տույժ 158.775 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն 2006 թ-ի հունիսից 2011 թ-ի մարտ ամիսների համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումարները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն

հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Թեմուր Տալոյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ տվյալ դեպքում պետք է կիրառվեն «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություն սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները, ապա այդ կապակցությամբ նշվեց հետևյալը:

«Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություն սահմանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հարկ վճարող) վրա, որոնք 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող և (կամ) դրան նախորդող հաշվետու ժամանակաշրջանների համար 2013 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում սույն օրենքով սահմանված կարգով ներկայացրել են ճշտված հաշվարկներ»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Թեմուր Տալոյանը գործունեությունը դադարեցրել է (լուծարվել է) 12.04.2011 թ-ին և «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություն սահմանելու մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ մտնելու պահի դրությամբ չի հանդիսացել անհատ ձեռնարկատեր, հետևապես նշված օրենքի դրույթները քննարկվող դեպքում, կիրառելի չեն:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են Ա/Ձ Թեմուր Տալոյանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված պարտավորությունները վերջինիս կողմից սահմանված ժամկետներում չվճարելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով դրանք գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումն իրավաչափ է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 30.08.2014 թ-ի թիվ 251 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ